ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

04.03.2014 09:42

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը կարգապահական վարույթ է հարուցել փաստաբան Արշակ Հարությունյանի (արտոնագիր 1158) նկատմամբ:

www.hahr.am լրատվական կայքում հետևյալ հրապարակումն է տեղ գտել «ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻ՞ՆՆ Է ՀՐԱՎԻՐԵԼ ՓԱՍՏԱԲԱՆԻՆ. ՏԵՍԱՆՅՈՒԹ» վերտառությամբ հրապարակումը, որտեղ մասնավորապես ասվում է. «Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր՝ Ն.Բաղդասարյանի նախագահությամբ, այսօր շարունակվել է

Գոռ Բարնաուսովի (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով (և Արմեն Զարաֆյանի) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդհոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով) քրեական գործի քննությունը:

Հելսինկյան ասոցիացիայի դիտորդ՝ Ա.Վեզիրյանին տրված հարցազրույցում, ամբաստանյալ՝ Գ.Բառնաուսովի մայրը հայտնել է, որ փաստաբանը հրավիրվել է նախաքննության մարմնի կողմից, մեղադրանքը առաջադրվել է մանկահասակ երեխայի ներկայությամբ, որին փաստաբանը չի առարկել:

Մանրամասները դիտեք տեսանյութերում»:

Մասնավորապես հրապարակման ներքևում տեղադրված է երկու տեսանյութ:

*Առաջին տեսանյութում (**այսուհետ՝ Տեսանյութ**) նշված գործով մեղադրյալի մայրը նշում է, մեջբերում ենք. «... մեղադրանքն ընդունելուց առաջ իմ որդին ինձ ասել է, որ էստեղ ներկայացրել են մի հատ փաստաբան Արշակ Հարությունյան անուն, ազգանունով: Այդ փաստաբանին ներկայացրել են, չգիտեմ կոնկրետ ով, բայց քննչական կազմում, իրանց կողմից է ներկայացվել, որ ինքը գործը կներկայացնի դատարան, որպեսզի իմ որդուն չձերբակալեն, այսինքն՝ պոդ զալոգ թողնեն մինչև դատավարության սկիզբը: Ես այդ փաստաբանին, Արշակ Հարությունյանին տեսել եմ այն պահին, նույնիսկ չեմ էլ իմացել, որ այդ ինքն է փաստաբանը, իրանց կողմից ներկայացրած, տեսել եմ, որ նստած գրում է, բայց ինչ է գրում չեմ էլ իմացել, որ էտ ինքն է, որ ծանոթանամ թե ինքը ինչ է գրում, և երբ իմ տղան ցուցմունք է տվել, այդ պահերին չի եղել այդ փաստաբանը: Փաստաբանը եղել է մարտի 4-ին, երբ*

*որ իմ տղային ուզել են տանեն, բերեն դատարան, որպեսզի տան այդ սանկցիան, այդ պահին ենք մենք տեսել այդ Արշակ Հարությունյանին:...»:**[1]***

*«Մենք անձամբ նրան ոչ մի հարցում չենք դիմել, մենք նրան չենք վարձել, այսինքն՝ որպեսզի լինի մեր տղայի կողքին, ուղղակի նա տրամադրվել է քննչական կազմի կողմից, որպեսզի նա գործը, այսինքն՝ դատարանում պոդ զալոգ ներկայացնելու իմ տղայի տեղը խոսալու փոխարեն խոսի Արշակ Հարությունյանը...»:**[2]***

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.9 կետի համաձայն՝ Փաստաբանը չի կարող ընդունել նախաքննության և դատաքննության փուլերում տվյալ գործով վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված՝ տվյալ վարույթին առնչվող անձի գործի վարման հետ կապված իրավական օգնություն ցույց տալու հանձնարարություն: Եթե փաստաբանը չկարողանա ապացուցել, որ քրեական գործով պաշտպանության համար իրեն է դիմել վստահորդը կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձ, ապա Պալատի խորհուրդը կարող է հաստատված համարել այն փաստը, որ փաստաբանը քրեական գործով վարույթում է հայտնվել նախաքննության մարմնի պատվերով: Պալատի խորհուրդը կարող է հաշվի առնել նաև փաստաբանի կողմից իրականացրած գործողությունների բնույթը՝ վստահորդի շահերը պատշաճ կարգով ներկայացված լինելու տեսանկյունից: Փաստաբանի կողմից նախաքննության մարմնի պաշտոնատար անձի հանձնարարությամբ (առաջարկությամբ) գործին ներգրավված լինելու և վստահորդին բավարար իրավական օգնություն ցույց տված չլինելու արարքների համակցությունը հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:

Հրապարակման մեջ առերևույթ առկա են փաստաբանի վարքագծի կանոնագրքի խախտում:

Վերոգրյալը հաշվի առնելով, ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանի որոշմամբ փաստաբան Արշակ Հարությունյանի (արտոնագիր թիվ 1158) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.9 կետի խախտման հատկանիշներով:

Հ.Գ. Հարկ է արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել

կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

---

[1] Տեսանյութի 1.42-ից մինչև 2.43 րոպեն:

[2] Տեսանյութի 3.45-ից մինչև 4.06 րոպեն

Առաջարկվող նորություններ

20.09.2013ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻՆ

25.10.2013ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

11.11.2013ԱՄՓՈՓՎԵԼ Է ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

15.11.2013ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ՇԱՎԱՐՇԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })